ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է «Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2018 թվականի
նոյեմբերի 7-ի թիվ 14 նիստի թիվ 18-11-14-14 որոշմամբ

Երևան-2018

ՀՏԴ 378:61
ԳՄԴ 74.58+5
Ե 813

Կրթական ծրագիրը հրատարակման է պատրաստվել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գիտության վարչության կողմից 2012-2015թթ: Քննարկվել և երաշխավորվել է ԵՊԲՀ Գիտակոորդինացիոն խորհրդում 2015թ. մայիսի 6-ի թիվ 3 նիստի արձանագրությամբ՝ ուղեցույցի կազմում: Լրամշակվել և հաստատվել է ԵՊԲՀ գիտական խորհրդի 2018թ. նոյեմբերի 7-ի թիվ 14 նիստում:

Հեղինակներ՝

Ա.Ա. Մուրադյան	ԵՊԲՀ ռեկտոր, պրոֆեսոր
Կ.Բ. Ենկոյան	ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր
Ս.Պ. Քոչարյան	ԵՊԲՀ գիտության վարչության պետ, դոցենտ
Լ.Ս. Մարտիրոսյան	ԵՊԲՀ գիտության վարչության ավագ մասնագետ
Գ.Գ. Փարսադանյան	ԵՊԲՀ գիտության վարչության գիտական կադրերի պլանավորման և պատրաստման բաժնի պետ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան:
Ե 813 Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի գիտակրթական ծրագիր: / Հեղ. խումբ,-Եր.: ԵՊԲՀ , 2018. - 45 էջ:

Սույն կրթական ծրագիրը ներկայացվել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կողմից համակարգվող Տեմպուսի «Զալցբուրգի սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային փոփոխություններ» (VERITAS) №543710-TEMPUS-1-2013-1-AM-TEMPUS-SMGR ծրագրի շրջանակներում՝ որպես գործող հիմնարար փաստաթուղթ՝եվրոպական կրթական համակարգում կիրառվող կանոնակարգերի և չափանիշների հետ համադրման նպատակով:

ՀՏԴ 378:61
ԳՄԴ 74.58+5

ISBN 978-9939-65-205-4
© ԵՊԲՀ, 2018

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գիտության վարչության կողմից մշակված ասպիրանտուրայի գիտակրթական ծրագիրը սահմանում է ասպիրանտական ծրագրի կառուցվածքը, նկարագրությունը, բովանդակությունը, դասընթացները, կրթական ու հետազոտական ծրագրերը, մոդուլների կազմն ու կրեդիտներով արտահայտված աշխատածավալները, ինչպես նաև դրանց ընթացակարգերը:

Այն մշակվել է՝ հիմնվելով ասպիրանտական կրթության զարգացման սկզբունքների վրա, որն իրականացվում է բուհի, գիտական կազմակերպության առանձնահատկությունների և մասնագիտությունների համաձայն:

Կրթական ծրագրի հիմքում ընկած են *«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի*, *«Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգի»*, *«Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի»* դրույթները՝ որպես ՀՀ ասպիրանտական կրթության արդիականացման ընդհանուր շրջանակ:

Այս կրթական ծրագիրը ներդաշնակեցվել է *Բոլոնիայի «Դոկտորական ծրագրեր եվրոպական գիտական հանրության համար» համաձայնագրին*, որով 2005թ. փետրվարի 3-5-ը Զալցբուրգում տեղի ունեցած սեմինարի ընթացքում կրթության 3-րդ մակարդակի համար մշակված 10 հիմնական սկզբունքները (այսուհետ՝ *Զալցբուրգյան սկզբունքներ*) հիմք հանդիսացան բարձրագույն կրթության ոլորտում ասպիրանտական ծրագրերի բարեփոխումների իրականացման համար:

Այս ծրագիրը նպատակ է հետապնդում ԵՊԲՀ ասպիրանտուրան ներդաշնակեցնել բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի որակավորումների ազգային և համաեվրոպական շրջանակներին՝ ասպիրանտուրայի կրթական կառուցամասն աստիճանաբար համապատասխանեցնելով Բոլոնիայի գործընթացի և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներին:

ԵՊԲՀ-ում գիտական կադրերի պլանավորումը և պատրաստումն իրականացնում է Գիտության վարչությունը՝ որպես մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանում: Այն իր մեջ ընդգրկում է գիտական կադրերի պլանավորման և պատրաստման, գիտական տեղեկատվության և վերլուծության, գիտակազմակերպչական բաժինները և վիվարիումը:

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ասպիրանտական նպատակային տեղի նկարագրությունը և բովանդակությունը

Ասպիրանտուրա մրցութային կարգով ընդունվում են մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան, իսկ բժշկական մասնագիտություններով բժշկի որակավորում, կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների դեպքում բժիշկ-մասնագետի որակավորում ունեցողները:

Ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Առկա ձևով ուսուցման տևողությունը չի գերազանցում 3 տարին, իսկ հեռակա ձևով ուսուցման տևողությունը՝ 4 տարին[1]:

Ասպիրանտուրայի ընդունելությունը՝ առկա ուսուցմամբ և պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար) պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով տեղերի համար իրականացվում է համապատասխան տարվա ժամանակահատվածի զորակոչը կազմակերպելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված ժամկետներում:[1]

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում, առնվազն 6 ամիս առաջ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) հաստատություններից ստացած հայտերի հիման վրա, սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում համապատասխան ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության տեղերի բաշխումը:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը ՀՀ պետական բյուջեից գումար է հատկացնում տվյալ ուսումնական տարվա հավանական դիմորդ-շրջանավարտներին օտար լեզուներից (անգլերեն կամ ֆրանսերեն, կամ գերմաներեն) և «Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ» առարկայից նախապատրաստական դասընթացների և քննությունների կազմակերպման ծախսերը հոգալու համար: Համապատասխան կազմակերպությունների հետ նախապատրաստական դասընթացների և

[1] Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգ

քննությունների կազմակերպման ու ֆինանսավորման պայմանագրերը կնքվում են համալսարանի կողմից:

Յուրաքանչյուր դիմորդ ունենում է օտար լեզվի (անգլերեն, ֆրանսերեն, կամ գերմաներեն) և «Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ» առարկայից նախապատրաստական դասընթացների և քննությունների մասնակցության մեկական իրավունք, որը կֆինանսավորվի ՀՀ պետական բյուջեով վերոհիշյալ նպատակի համար նախատեսված միջոցների հաշվին: Համալսարանը այդ ուսումնական տարվա հավանական դիմորդ-շրջանավարտների ցուցակները ներկայացնում է դասընթացներ կազմակերպող և քննություններ անցկացնող կազմակերպություններ՝ վերջիններիի հետ կնքելով համապատասխան պայմանագրեր:

Միաժամանակ վերոհիշյալ ցուցակների 1 օրինակ տրամադրվում է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր ուսումնական տարվա ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը հաստատելու մասին» որոշմամբ բուհերին ուղարկվում է հաստատված տեղերի ցանկը և տրվում է անհրաժեշտ ժամանակահատված ընդունելության քննությունները կազմակերպելու նպատակով, որոնց ժամանակացույցը և վայրը նշված ժամկետներում ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Ասպիրանտուրայի ընդունելության համար դիմումների ընդունումը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կատարվում է սահմանված ժամկետներում, որի ավարտին ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացվում է զորակոչի ենթակա արական սեռի դիմորդների ցուցակները:

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունը ևս կազմակերպվում է սահմանված ժամկետներում, որոնց արդյունքները ամՓոՓ տեղեկատվության տեսքով ներկայացվում են ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Մասնագիտական քննության մրցույթին մասնակցող բոլոր դիմորդների տվյալները նշված ժամկետում ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Ասպիրանտուրայի ընդունելության հայտարարությունը սահմանված կարգով

հրապարակվում է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և հաջորդ օրը վերջինս ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Ասպիրանտուրայի ընդունելությունը կազմակերպելու ժամանակ թույլատրվում է ներկա տարվա շրջանավարտ-դիմորդներից բարձրագույն կրթության դիպլոմի փոխարեն ընդունել համապատասխան տեղեկանք դիմորդի բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճանի մասին' մինչև մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմ (պետական նմուշի ավարտական փաստաթուղթ) ներկայացնելը:

Ասպիրանտը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, ով սովորում է ասպիրանտուրայում՝ մասնագիտական գիտելիքները խորացնելու և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն պատրաստելու, իսկ հետազոտողի հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի առկայության դեպքում՝ նաև համապատասխան որակավորման աստիճան ստանալու համար:

Առկա ուսուցման ձևով և անվճար հիմունքներով ասպիրանտուրա ընդունվածներին տրվում է սահմանված չափի պետական կրթաթոշակ՝ ընդունման օրվանից:

Ասպիրանտն ուսման ընթացքում պետք է.

- հանձնի ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված քննություն մասնագիտական առարկայից,
- կուտակի համապատասխան կրեդիտներ,
- ավարտի ատենախոսությունը և համապատասխան հաստատությունում անցկացնի ատենախոսության նախնական քննարկում,
- ունենա հաստատության գիտական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլան, գիտական ղեկավար և առնվազն 36 ժամ գիտամանկավարժական կամ հետազոտական ծանրաբեռնվածություն:

Ասպիրանտուրայում ուսուցման լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է 2 փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատածավալների երաշխավորված բաշխումն ըստ ուստարիների բերված է Աղյուսակ 1-ում.

Ուստարի	I	II	III	IV	Ընդամենը
Կրթական	26 / 15	12 / 10	12 / 10	- / 5	50 / 40
Հետազոտական	34 / 30	48 / 37	48 / 39	- / 34	130 / 140
Ընդամենը	60 / 45	60 / 47	60 / 49	- / 39	180

Աղյուսակ 1. *Հետազոտողի ծրագրի հետազոտական և ուսումնական կառուցամասերի երաշխավորվող համամասնությունը*

ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ասպիրանտների՝ հետազոտողների գիտական ղեկավարների համար ասպիրանտին ղեկավարելու աշխատանքի ծավալը երրորդ աստիճանի կրթական համակարգի կրթական ծրագրով սահմանել տարեկան 200 ժամ ժամային ծանրաբեռնվածություն մեկ ասպիրանտի համար և 60 ժամ ժամային ծանրաբեռնվածություն մեկ հայցորդի համար:

Հիմք՝ ՀՀ կառավարության 20.07.2001թ. h. 662 որոշմամբ (որոշման լրացումները և փոփոխությունները՝ ՀՀ կառավարության 24.12.2001թ. h. 1239, 11.04.2002թ. h. 391, 25.03.2004թ. h. 496-Ն, 15.12.2005թ. h. 2183-Ն և 26.02.20015թ. h. 214-Ն որոշումներ) ընդունված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ» կարգը:

ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է *ընդհանուր* և *մասնագիտական պատրաստվածության* կրթամասերից, *պրակտիկաներից, ատեստավորումներից:* Առաջինը ծառայում է հետազոտողի որակավորման համար անհրաժեշտ ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երկրորդ կրթամասն ապահովում է հետազոտողի գիտամանկավարժական հմտությունների զարգացումը, իսկ երրորդը՝ նրա մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը:

Ընդհանուր պատրաստվածության կրթամասի աշխատածավալը 20 կրեդիտ է: Այս կրթամասի դասընթացները նպատակաուղղված են ասպիրանտների ընդհանրական, փոխանցելի ունակությունների ձևավորմանը: Այն ներառում է 0.5-2 կրեդիտ չափաբաժիններով դասընթացներ:

Ընդհանուր պատրաստվածության կրթամասն ընդգրկում է 3 կրեդիտ ընդհանուր ծավալով որակավորման քննություններ:

Ուսումնական կառուցամաս

Ընդհանուր պատրաստվածության կրթամաս

Պարտադիր դասընթացներ

1. Մասնագիտական օտար լեզու /ակադեմիական գրագրություն/
2. Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն
3. Բժշկական ինֆորմատիկա
4. Բժշկական հոգեբանություն
5. Գիտական էթիկա
6. Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և գործիքակազմ
7. Բիոստատիստիկա
8. Նախագծերի դիզայն, մշակում և կառավարում
9. Ապացուցողական բժշկություն
10. Հաղորդակցման կարողություններ և գործարար գրագրություն

Ընտրովի դասընթացներ

1. Մտավոր սեփականության իրավունք և արտոնագրային գործ
2. Առողջապահական իրավունք
3. Մենեջմենթ. Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում
4. Լաբորատոր և այլ հետազոտական մեթոդներ
5. Շրջակա միջավայր և առողջություն

Մասնագիտական պատրաստվածության ծրագրում կրթամասի ընդհանուր աշխատածավալը սահմանվում է 20 կրեդիտ և ներառում է 6 կրեդիտ աշխատածավալով պարտադիր ու 4 կրեդիտ աշխատածավալով ընտրովի մասնագիտական դասընթացներ:

Մասնագիտական պատրաստվածության կրթամասն ընդգրկում է 6 կրեդիտ աշխատածավալով որակավորման քննություն: Որակավորման քննությունները հանձնել թույլատրվում է ընդհանուր և մասնագիտական դասընթացները հաջողությամբ ավարտելուց հետո:

Մասնագիտական պատրաստվածության կրթամաս

1. Մասնագիտական պարտադիր դասընթացներ – 1.1
2. Մասնագիտական պարտադիր դասընթացներ – 1.2
3. Մասնագիտական ընտրովի դասընթացներ – 2.1

Պրակտիկաները ծրագրում կազմում են 10 կրեդիտ աշխատածավալ, որից 4 կրեդիտը հետազոտական բնույթի պրակտիկան է, իսկ 3-ական կրեդիտը՝ մանկավարժական և թիմային աշխատանքը: Վերջինս նախատեսում է բակալավրիատում գործնական և սեմինար պարապմունքների, լաբորատոր աշխատանքների անցկացում, ինչպես նաև կուրսային և ավարտական աշխատանքի ղեկավարում: Պրակտիկաները կազմակերպվում են ասպիրանտի և գիտական ղեկավարի կողմից կազմված և հաստատված ծրագրով:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ, ՊՐԱԿՏԻԿԱ

Ասպիրանտուրայում առկա ուսուցման ձևով ուսանելու ժամանակը համարվում է գիտամանկավարժական ստաժ:

ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ	ԿՐԵԴԻՏ
Մանկավարժական պրակտիկա	**3.0**
Հետազոտական պրակտիկա	**4.0**
Թիմային աշխատանքների պրակտիկա	**3.0**
Ընդամենը	**10.0**

Ասպիրանտական ծրագրի նպատակն է՝

- տվյալ մասնագիտության ոլորտում յուրաքանչյուր ասպիրանտի համար ապահովել անհատական պրակտիկ գիտելիք, փորձառնություն և հմտություն,
- ընտրված մասնագիտության բնույթի և տրամաբանության ընկալում՝ որպես ամբողջություն,
- հիմնարար գիտության ոլորտում բավարար գիտելիք, որը թույլ է տալիս զբաղվել ինքնակրթությամբ ֆորմալ կրթության ավարտից հետո և լինել փոփոխվող մասնագիտությունների առաջատար դիրքերում,
- ապահովել մասնագիտական կարիերայի ընթացքում տվյալ բնագավառում

արդյունավետ գործելու մոտիվացիա:

Ասպիրանտական կրթության ընթացքում ասպիրանտը ձեռք է բերում հետևյալ հմտություններն ու կարողությունները.

1. Անհատական հետազոտության իրականացում, գիտական խնդիրների անկախ լուծում, մասնագիտական գիտելիքի ձեռքբերում, մասնակցություն թիմային աշխատանքներին հետազոտության միևնույն թեմայի շուրջ. հետազոտության ոլորտի անհրաժեշտ գիտելիք և ուսումնասիրվող թեմայի բավարար գիտելիք,
   - հոդվածներում հետազոտության արդյունքների ներկայացում, ուսումնասիրությունների, հարցումների, գնահատումների իրականացում՝ զարգացնելով և ամրապնդելով վերլուծական ու քննադատական մտածողությունը,
   - տվյալների շտեմարաններից, վիճակագրական տվյալներից և համապատասխան գրականությունից օգտվելու կարողություն:

2. Ընդհանուր հմտությունների ձեռքբերում.
   - թիմային աշխատանքներում հաղորդակցվել գործընկերների հետ
   - մասնակցել տարբեր սեմինարների և գիտաժողովների՝ ներկայացնելով սեփական հետազոտության արդյունքները,
   - նախաձեռնել սեմինարներ և այլ միջոցառումներ, աշխատաժողովներ,
   - զարգացնել բանավոր և գրավոր հաղորդակցման, ակադեմիական գրագրության հմտություններ,
   - ուսումնառության ընթացքում մասնակցել հետազոտական, անհատական և թիմային հմտությունների զարգացմանն ուղղված հատուկ դասընթացների
   - ձեռք բերել այլ հմտություններ՝ ուժեղացնելով կարողությունները և գիտելիքները տվյալ ոլորտում:

3. Թիմային խմբերում աշխատելու հմտությունների ձեռք բերում, թիմի ղեկավարում և դրամաշնորհների դիմելու հմտություններ'
   - Ասպիրանտ հետազոտողներին անհրաժեշտ է ղեկավարել ուսանողական խմբեր և զբաղվել մենթորությամբ՝ այսպիսով ուժեղացնելով թիմային խմբերում աշխատելու կարողությունները և թիմի ղեկավարման հմտությունները,
   - Բուհը առաջարկում է սեմինարներ և կլոր-սեղան քննարկումներ տարբեր դրամաշնորհային առաջարկների մեխանիզմների շուրջ, ներառյալ՝ հաջողված դրամաշնորհների օրինակներ, դրամաշնորհներին դիմելու զանազան

տեսակները և ուղիները:

4. Դասավանդման, ղեկավարման և/կամ մենթորության հմտություններ

• Հետազոտողների կողմից դասավանդվող պարտադիր դասընթացների միջոցով ասպիրանտական ծրագիրը հետազոտողներին տալիս է դասավանդման և այլ գործնական կարողություններ, ինչպես օրինակ՝ մենթորությունը:

5. Ինքնավարություն, նախաձեռնություն և ձեռներեցության հմտություններ
6. Էթիկայի նորմերին համահունչ վարքագիծ, հուսալի գիտական պրակտիկա, կայունություն, պատասխանատվություն, մասնագիտական վարքագիծ:
7. Ասպիրանտական ուսումնառության վերջում ասպիրանտը պետք է՝

1) գրավոր ներկայացնի և կիրառի նոր գիտելիք ինքնատիպ և որակյալ հետազոտության միջոցով, որը երաշխավորում է հետազոտության հետագա հրատարակելիությունը,
2) հասկանա և տիրապետի տվյալ մասնագիտության հիմնական և նորագույն գիտելիքին,
3) կարողանա պատկերացնել, մշակել և իրականացնել ծրագիր նոր գիտելիքի ստեղծման, կիրառման կամ մասնագիտության ըմբռնման նպատակով և համապատասխանեցնել ծրագրի մշակումը՝ հաշվի առնելով անկանխատեսելի խնդիրները,
4) ձեռք բերի հետազոտություն կատարելու համար անհրաժեշտ հմտությունների հստակ պատկերացում:

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ (ՀԵՏԱԶՈՏՈՂԻ) ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ասպիրանտական տեղի անհրաժեշտությունը, ընտրությունը և հիմնավորումը, գիտական միտվածությունը

Համաձայն վերոնշյալ կարգի՝ ԵՊԲՀ յուրաքանչյուր ամբիոն և գիտական ստորաբաժանում կարող է ներկայացնել հայտ-միջնորդագիր տվյալ տարվա ասպիրանտուրայի տեղի համար:

Ասպիրանտական տեղի հիմնավորումը պայմանավորված է ամբիոնում կամ գիտահետազոտական կենտրոնում տվյալ մասնագետի կարիքով, համալսարանի գիտական դպրոցի պահպանման և հզորացման, հետազոտությունների զարգացման, երիտասարդացման նպատակով:

Ասպիրանտուրայի դիմորդներ, դասընթացներ և թեստավորում, մրցույթի կազմակերպում

(հայտարարություն տպագիր մամուլում, գործերի ընդունում,
հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում)

Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1. բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ Փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
2. օտար լեզու և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),
3. Հրատարակված գիտական աշխատանքների ցուցակ կամ ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,
4. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3 x 4 չափսի),
5. քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Անձնագիրը և բարձրագույն կրթության դիպլոմը ընդունվողը ներկայացնում է անձամբ:

Ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար հաստատության ղեկավարի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով հաստատության ղեկավարի կամ տեղակալի նախագահությամբ:

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար հաստատության ղեկավարի հրամանով ստեղծվում են մասնագիտական քննական հանձնաժողովներ (այսուհետ հանձնաժողով):

Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ մասնագիտական բնագավառի գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող 3-5 մասնագետ:

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման ժամանակացույցը հաստատում է հաստատության ղեկավարը և տեղեկացնում է նախարարությանը:

Դիմորդին մասնագիտական քննությանը մասնակցելու թույլտվությունը տալիս է հաստատության ընդունող հանձնաժողովը օտար լեզվից և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներից ստացած համապատասխան միավորը հավաստող վկայականի և/կամ տեղեկանքի առկայության դեպքում, ինչպես նաև ընդունելության մասնագիտությանը համապատասխան գիտական ռեֆերատի մասին մասնագիտական ամբիոնի (սեկտորի, դեպարտամենտի) կամ գիտական ստորաբաժանման գրավոր դրական գրախոսականի կամ գրախոսվող գիտական ամսագրերում հրատարակված գիտական աշխատանքների մասին հաստատված ցուցակի դեպքում:

Ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում

1) անգլերենից «TOEFL» (iBT) (այԲիԹի) 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ) 5.5 միավորը.
2) ֆրանսերենից «TCF» (ԹիՍիէՖ) 200 միավորը.
3) գերմաներենից «on DaF» (օն ԴաՖ) 60 միավորը:

Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներից ստացած անհրաժեշտ նվազագույն միավորը 25-ն է:

Մասնագիտական քննության հարցաշարը, որն ընդգրկում է նախորդ աստիճանների ծրագրային նյութը, կազմվում է հաստատության մասնագիտական ամբիոնների (դեպարտամենտների), գիտական ստորաբաժանման կամ հանձնաժողովի կողմից և հաստատվում է հաստատության ղեկավարի կողմից:

Ասպիրանտուրայի մասնագիտական քննության արդյունքն ուժի մեջ է տվյալ ուսումնական տարվա տվյալ հաստատության ընդունելության քննության ընթացքում:

Գործընթացի թափանցիկության ապահովում

Ասպիրանտուրայի ընդունելության մասին հայտարարությունը տեղադրվում է հաստատության հայտարարությունների համար նախատեսված թերթում, նաև տեղադրվում է պաշտոնական կայքէջում:

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման ժամանակացույցը հաստատում է հաստատության ղեկավարը և տեղեկացնում է նախարարությանը:

Հաստատության հայտարարությունների համար նախատեսված վայրում Փակցվում և պաշտոնական կայքէջում տեղադրվում է մասնագիտական քննության

1. անցկացման օրվա, տեղի և ժամի վերաբերյալ տեղեկատվությունը՝ քննությունն սկսելուց 7 աշխատանքային օր առաջ.
2. հարցաշարը՝ մասնագիտական քննությունից առնվազն 1 ամիս առաջ.
3. ընթացակարգային պահանջները, որոնք հաստատվում են հաստատության ղեկավարի կողմից:

Ելնելով մասնագիտության առանձնահատկությունից՝ մասնագիտական քննության

անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) սահմանում է ընդունող հանձնաժողովը:

Բանավոր քննությունը ձայնագրվում է, և արդյունքները պահպանվում են հրապարակվելուց հետո առնվազն 24 ժամ:

Մասնագիտական քննության արդյունքները գնահատվում են 20 (քսան) միավորանոց սանդղակով: Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդն ստացել է առնվազն 13 միավոր:

Գիտելիքների գնահատման մասին որոշումն ընդունվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականի հաշվարկմամբ:

Դիմորդը քննության է ներկայանում անձը հաստատող Փաստաթղթով:

Ասպիրանտուրա ընդունվում է մասնագիտական քննությունից առավելագույն միավոր ստացած անձը:

Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշներն ըստ հերթականության.

1) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի ընդհանուր միջին որակական գնահատականը.
2) բակալավրի և մագիստրոսի ընդհանուր միջին որակական գնահատականի գումարը.
3) հրատարակված գիտական աշխատանքների թիվը.
4) միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը (զեկուցումները):

Ընդունող հանձնաժողովը մրցույթի արդյունքների հիման վրա ընդունում է որոշում յուրաքանչյուր դիմորդի վերաբերյալ:

Ասպիրանտուրա ընդունվելու կամ մրցույթով չանցնելու վերաբերյալ որոշման մասին դիմորդներն իրազեկվում են մասնագիտական քննությունից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:

Մասնագիտական քննության բողոքարկման ընթացակարգային պահանջներն են՝

1) դիմորդը կարող է մասնագիտական քննության գնահատականը բողոքարկել հանձնաժողովին՝ արդյունքները հրապարակվելուց հետո 1 ժամվա ընթացքում, հանձնաժողովի նախագահին ներկայացնելով գրավոր բողոքը, որը քննարկվում է նույն օրը.
2) բողոքարկմանը մասնակցում են հաստատության վարչական անձնակազմի (դեկան կամ ուսումնամեթոդական ստորաբաժանման ներկայացուցիչ)՝ տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատողը և հաստատության ուսանողական կամ երիտասարդ գիտնականների խորհրդի ներկայացուցիչը, որոնց

թեկնածությունները նախապես հաստատվում են հաստատության ղեկավարի կողմից.

3) դիմորդի ներկայությամբ ուսումնասիրվում և քննարկվում է գրավոր աշխատանքը, իսկ բանավոր քննության դեպքում լսվում է ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների և ներգրավված անձանց ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝

ա. գնահատականը թողնել անփոփոխ.

բ. գնահատականը բարձրացնել.

4) ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, հաստատության վարչական անձնակազմի, ուսանողական կամ երիտասարդ գիտնականների խորհրդի ներկայացուցչի և դիմորդի կողմից: Նշված անձանցից որևէ մեկից ընդունված որոշմանն անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը.

5) գնահատականի փոփոխման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն.

6) մասնագիտական քննության գնահատականը կարող է բողոքարկվել դատարանում՝ օրենքով սահմանված կարգով:

Ընդունելության քննություն

1. Հրաման, եռակողմ պայմանագիր

Ասպիրանտների հրամանագրումը կատարվում է հաստատության ղեկավարի հրամանով՝ ասպիրանտի հետ կնքելով համապատասխան պայմանագիր համալսարանի, ասպիրանտի և գիտական ղեկավարի հարաբերությունները կանոնակարգելու համար: Պայմանագրում հստակ ձևակերպված են պայմանագրի առարկան, բոլոր կողմերի պարտականությունները և իրավունքները, գործողության կատարման ժամկետը:

2. Գիտական թեմայի, մասնագիտական դասիչի և գիտական ղեկավարի հաստատում

Ասպիրանտն ընդունվելուց և հրամանագրվելուց հետո՝ սահմանված ժամկետում պետք է ունենա հաստատության գիտական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլան և գիտական ղեկավար:

Յուրաքանչյուր գիտական ղեկավար կարող է միաժամանակ ունենալ 5-ից ոչ ավելի ասպիրանտ և հայցորդ:

Ատենախոսության թեման հաստատելու իրավունք ունեն այն բարձրագույն ուսումնական հաստատությունները կամ գիտական կազմակերպությունները, որոնք

ունեն ԲՈՀ-ի թույլտվությունը: Թույլտվություն ստանալու համար բարձրագույն ուսումնական հաստատությունը կամ գիտական կազմակերպությունը պետք է դիմի ԲՈՀ՝ տվյալ մասնագիտությամբ գիտական աստիճան ունեցող առնվազն 3 (առնվազն 1 գիտությունների դոկտոր) աշխատողի առկայության դեպքում, որոնց համար տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունը կամ գիտական կազմակերպությունը հիմնական աշխատավայր է:

Ատենախոսության թեմա հաստատելու համար հայցորդը դիմում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ գիտական կազմակերպության ղեկավարին: Թեման հաստատվում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ կազմակերպության գիտական խորհրդում՝ համապատասխան ստորաբաժանումներում քննարկվելուց հետո: Ատենախոսության թեման պետք է լինի արդիական: Ատենախոսության թեմայի հաստատման վերաբերյալ որոշման մեջ նշվում են թեմայի անվանումը, գիտության բնագավառը և մասնագիտությունն ըստ աստիճանաշնորհման անվանացանկի:

Գիտական խորհուրդը հաստատում է նաև ատենախոսության գիտական ղեկավար՝ թեկնածուական ատենախոսության համար, անհրաժեշտության դեպքում խորհրդատու՝ դոկտորական ատենախոսության համար: Գիտական ղեկավարի կամ խորհրդատուի համաձայնությունը պարտադիր է:

Գիտական ղեկավար կարող են նշանակվել տվյալ բնագավառի գիտության դոկտորները և այն թեկնածուները, ովքեր ստացել են ԲՈՀ-ի թույլտվությունը: Թույլտվություն ստանալու համար ԲՈՀ է ներկայացվում կազմակերպության ղեկավարի միջնորդությունը և թեկնածուի՝ համապատասխան գիտական բնագավառում առնվազն 30 տպագիր գիտական աշխատանքների ցուցակը, որոնցից առնվազն 5-ը՝ վերջին 5 տարում:

Ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ որոշման մասին տվյալ կազմակերպությունը տեղեկացնում է ԲՈՀ-ին:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

I

Կրթական գործընթացի կազմակերպում՝ ընդհանուր գիտական առարկաներից

(ժամ, կրեդիտ, թվեր)

Ասպիրանտը կամ հայցորդը ուսման ընթացքում պետք է.

1) հանձնի ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված քննությունը (քննություն-ները) և ստուգարքը (ստուգարքները) (այդ թվում մասնագիտական քննությունը), կուտակի համապատասխան կրեդիտներ, ավարտի ատենախոսությունը և համապատասխան հաստատությունում անցկացնի ատենախոսության նախնական քննարկում.
2) ունենա հաստատության գիտական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլան և գիտական ղեկավար։
3) ունենա առնվազն 36 ժամ գիտամանկավարժական կամ հետազոտական ծանրաբեռնվածություն։

Ասպիրանտուրայում առկա ուսուցման ձևով ուսանելու ժամանակը համարվում է գիտամանկավարժական ստաժ։

Կրթական ծրագիրն իրականացվում է ասպիրանտի ուսումնառության անհատական ծրագրի համաձայն՝ պահպանելով ավարտական պահանջներում սահմանված դրույթները։ Ծրագրի հիմքում դրված է ասպիրանտի որակավորման աստիճանի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված 180 կրեդիտ միավորով գիտակրթական աշխատածավալը։

Ինչպես նշվեց նախորդ գլխում, ասպիրանտի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ հետազոտական և ուսումնական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատածավալների երաշխավորված բաշխումն ըստ ուստարիների բերված է *Աղյուսակ 1*-ում։

Ընդհանուր պատրաստվածության ուսումնական մասի աշխատածավալը 20 կրեդիտ է։ Ծրագրում այս կրթամասի դասընթացների առկայությունը նպատակաուղղված է ասպիրանտների ընդհանրական (փոխանցելի) հմտությունների ձևավորմանը։ Այն ներառում է 0,5-2 կրեդիտ աշխատածավալով 10 պարտադիր և 5 ընտրովի դասընթացներ։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բոլոնիայի գործընթացի համաձայն, ասպիրանտական ծրագրերը պետք է հիմնված լինեն ինքնատիպ հետազոտության վրա՝ բարձրագույն կրթության 3-րդ մակարդակը դարձնելով եզակի և նպատակ ունենալով ներդրում կատարել գիտության, տեխնոլոգիայի, կրթության, արվեստի և մշակույթի ոլորտներում։ Այս ամենը բերում է գիտելիքահեն հասարակության ձևավորմանը, քանզի ապագա աշխատաշուկան

կախված է ասպիրանտներից և իրենց ղեկավարներից:

Ասպիրանտները պետք է կարողանան իրականացնել անկախ և պատասխանատու հետազոտություն՝ օգտագործելով քննադատական վերլուծություն և դատողություն, նոր ու բարդ գաղափարների գնահատում և սինթեզ, հաղորդակցում ավելի լայն գիտական հանրության և հասարակության հետ:

Գիտական հետազոտություններ կատարելիս՝ հետազոտության իրականացման համար պատշաճ գործիքներ ապահովելու համար ասպիրանտն օգտվում է հաստատության գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, գործուղումների իրավունքից, հանրակացարանից և այլն:

ԲՈՒՀ-ում գիտահետազոտական միջավայրը չափվում է տեղական և միջազգային հրատարակությունների թվով, արտաքին ֆինանսավորման ծավալով, որակյալ ասպիրանտների թվով և այլն: Գիտահետազոտական միջավայրի նշանակալիությունը գնահատվում է այլ բուհերի հետ համեմատություն անցկացնելու միջոցով:

Հետազոտական աշխատանքների կազմակերպում

1. Միջազգային գրականության վերծանում
2. Հետազոտության նյութի հավաքագրում
3. Հետազոտության մեթոդների յուրացում
4. Հետազոտության արդյունքների ամփոփում
5. Գիտական հոդվածների հրապարակում

Հետազոտության ակնկալվող արդյունքներ

Ատենախոսությունը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է, որը ներկայացվում է գիտական աստիճանի հայցման համար:

Թեկնածուի գիտական աստիճանի (առաջին գիտական աստիճան) հայցման համար ներկայացված ատենախոսությունն աշխատություն է, որը կարող է գնահատվել իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում և կամ կիրառական կարևոր խնդրի լուծումն ապահովող գիտականորեն հիմնավորված տեխնիկական, տնտեսական կամ տեխնոլոգիական մշակում:

Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները մինչև ատենախոսության պաշտպանությունը պետք է հրատարակվեն միջազգային նշանակություն ու ազդեցության գործակից ունեցող և ԲՈՀ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գրախոսվող գիտական ամսագրերում:

Գիտաժողովները, գիտական սեմինարները, աշխատաժողովները տվյալ ծրագիրն իրականացնող կառույցի (ֆակուլտետի, ամբիոնի, կենտրոնի և այլն) կողմից կազմակերպվող և կանոնավոր գործող սեմինարների շարք է, որոնց ընթացքում ասպիրանտին ցուցաբերվում է տվյալ մասնագիտական ոլորտում գիտական հետազոտություն կատարելու մեթոդական աջակցություն. ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու ունակությունները և հմտությունները: Գիտական սեմինարներից ասպիրանտը պետք է հավաքի 35 և ավելի կրեդիտներ:

Ուսումնառության ընթացքում խրախուսվում է ասպիրանտների մասնակցությունը միջազգային և տեղական գիտաժողովներին, որի համար տրվում է առնվազն 2 կրեդիտ:

Մոնոթեմատիկ գիտաժողովներին, սեմինարներին, Խորհրդի նիստին մասնակցության դեպքում, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման ժամանակ տրվում է 1 կրեդիտ:

Հոդվածներ. Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները մինչև ատենախոսության պաշտպանությունը պետք է հրատարակվեն միջազգային նշանակություն ունեցող, ազդեցության գործակից ունեցող և ԲՈՀ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գիտական ամսագրերում:

Թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունների համար անհրաժեշտ է առնվազն 6 գիտական հոդված, այդ թվում առանց համահեղինակների՝ 2-ը, կամ առնվազն 3 գիտական հոդված, այդ թվում՝ առնվազն 1 հոդված Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում և 1 հոդված առանց համահեղինակների:

Գիտահետազոտական աշխատանքի և ատենախոսության պատրաստման համար ծրագրում նախատեսվում է 130/140 կրեդիտ աշխատածավալ:

Կրեդիտները բաշխված են հետևյալ կերպ.

- ԲՈՀ-ի սահմանած ամսագրերում, այդ թվում՝ հոդված ժողովածուներում՝ 3 կրեդիտ,
- հոդված այլ երկրների ԲՈՀ ամսագրերում՝ 5 կրեդիտ,
- հոդված ազդեցության գործակից ունեցող ամսագրերում՝ 12 կրեդիտ:

Ատենախոսական թեզը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է, որը ներկայացվում է գիտական աստիճանի հայցման համար:

Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորված է ասպիրանտի թեկնածուական ատենախոսության թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ:

Ատենախոսության մեջ ասպիրանտը պարտավոր է նշել այն հեղինակներին և աղբյուրները, որոնցից նա փոխառել է առանձին դրույթներ կամ նյութեր:

Ատենախոսությունը պետք է ունենա համառոտ շարադրանք՝ սեղմագիր: Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը: Սեղմագիրը տպագրվում է մասնագիտական խորհրդի թույլտվությամբ՝ թեկնածուի գիտական աստիճանի համար՝ մինչև 1 տպագրական մամուլ ծավալով:

ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ, ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Ասպիրանտական ծրագիրը գործում է հստակ շրջանակներում և ապահովում է թափանցիկ և պարզ ընդունելության ընթացակարգեր, պատշաճ վերահսկողություն և որակյալ գնահատում: Այստեղ հաշվի է առնվում այն, որ մեծ թվով շրջանավարտներ իրենց կարիերան ստեղծում են ինչպես ակադեմիական, այնպես էլ ոչ ակադեմիական հաստատություններում, այդ իսկ պատճառով ծրագրերը պետք է ապահովեն շրջանավարտներին այլ անհրաժեշտ հմտություններով:

Ատեստավորումները կատարվում են սահմանված ժամանակի համար (ընթացիկ որակավորման, ամփոփիչ) և համապատասխան ձևաթղթերի, հաշվետվությունների, պլանների կատարումը հաստատող փաստաթղթի հիման վրա:

1. Ընթացիկ ատեստավորում

- Ասպիրանտն հաստատված աշխատանքային պլանի համաձայն յուրաքանչյուր ուսումնական տարի Գիտության վարչություն է ներկայացնում հաշվետվություն կատարված աշխատանքների մասին՝ կրթական, հետազոտական և քննական մասնաբաժիններով:
- Տարեկան հաշվետվությունը ներկայացվում է քննարկման համապատասխան ամբիոնի նիստում: Ստացված եզրակացությունների հիման վրա ձևակերպվում է արձանագրություն: Ասպիրանտը և իր գիտական ղեկավարը ասպիրանտուրայի յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում ստացված արդյունքների և առաջադիմության տվյալների հիման վրա ներկայացնում է հաշվետվություն սահմանված կարգով:
- Ասպիրանտը բոլոր նշված փաստաթղթերով անցնում է ատեստավորում ԵՊԲՀ ռեկտորի կողմից հաստատված հատուկ հանձնաժողովում:
- Ատեստավորում չանցած ասպիրանտին տրվում է հնարավորություն 3-4 ամիս հետո անցնել կրկնակի ատեստավորում: Երկրորդ անգամ ատեստավորումը չանցած ասպիրանտը գիտական հաստատության ղեկավարի հրամանով ազատվում է ասպիրանտուրայից:

2. Որակավորման քննություններ

Որակավորման քննություններ հանձնում են այն անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթության որակավորման հետևյալ աստիճանները՝ դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս, իսկ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժշկի որակավորում կամ բժիշկ-մասնագետ:

Որակավորման քննությունները գիտական աստիճանաշնորհման անբաժանելի մասն են, որոնց նպատակը հայցորդի՝ որպես ապագա գիտնականի մասնագիտական պատրաստվածության ստուգումն է:

Ասպիրանտի համար սահմանվում են որակավորման քննություններ մասնագիտությունից:

Մասնագիտությունից քննությունը հանձնվում է այն գիտական հիմնարկներում, կազմակերպություններում և բուհերում (այսուհետև՝ հիմնարկներ), որոնք ունեն ԲՈՀ-ի թույլտվությունը:

Հիմնարկը ԲՈՀ է ներկայացնում մասնագիտական քննություն ընդունող հանձնաժողովի կազմը՝ հաստատման համար:

Հանձնաժողովը հաստատվում է հետևյալ կազմով՝ նախագահ (գիտության դոկտոր) և 2-4 անդամներ (գիտության դոկտոր և թեկնածու): Մեկ անձը կարող է լինել երկուսից ոչ ավել հանձնաժողովների անդամ: Հանձնաժողովում կարող են ընդգրկվել գիտնականներ նաև այլ հիմնարկներից:

Քննությունները և ստուգարքը հանձնվում են ԲՈՀ-ի հաստատած ծրագրերով: Քննությունը հանձնվում է ատենախոսության թեմայի հաստատումից հետո և այն մասնագիտությունից, որով հաստատվել է ատենախոսության թեման՝ ԲՈՀ-ի հաստատած ծրագրով:

Անհրաժեշտության դեպքում կազմվում է լրացուցիչ ծրագիր, որը պետք է ընդգրկի հայցորդի հետազոտությունների ոլորտը կամ գիտության տվյալ բնագավառի ընդհանուր մասնագիտական հարցեր: Լրացուցիչ ծրագիրը մշակվում է համապատասխան ամբիոնում (բաժնում, լաբորատորիայում) և հաստատվում է այն ԲՈՒՀ-ի (ֆակուլտետի), հիմնարկի գիտական խորհրդում, որտեղ ընդունվում է քննությունը:

Այն դեպքերում, երբ հայցորդի բարձրագույն կրթությունը չի համապատասխանում գիտության այն բնագավառին (ենթաբնագավառին), որով հաստատվել է ատենախոսության թեման, հայցորդը պետք է հանձնի քննություն ընդհանուր մասնագիտությունից:

Որակավորման քննությունները և ստուգարքը կազմակերպվում են տարեկան 2

քննաշրջաններով (մայիս-հունիս և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին):

Քննության և ստուգարքի ընթացքում յուրաքանչյուր հայցորդի համար լրացվում է արձանագրություն, որտեղ գրանցվում են քննական հարցերը և քննության վերջնական արդյունքը:

Որակավորման քննությունները գնահատվում են 20 (քսան) միավորանոց սանդղակով՝ «գերազանց» , «լավ» , «բավարար» և «անբավարար»:

Մասնագիտական քննությունը համարվում է հանձնված «գերազանց» կամ «լավ» գնահատականի դեպքում:

Արձանագրությունը ստորագրում են քննական հանձնաժողովի նախագահը և անդամները: Արձանագրությունները պահպանվում են քննություն և ստուգարք ընդունող հիմնարկներում:

Որակավորման քննության և ստուգարքի հանձնման մասին տեղեկանքը տալիս է քննություն, ստուգարք ընդունող հիմնարկը:

Որակավորման քննությունը կամ ստուգարքը չհանձնելու դեպքում հայցորդը կարող է այն հանձնել հաջորդ քննաշրջաններում:

Ընդհանուր պատրաստվածության կրթամասն ընդգրկում է 3/6 կրեդիտ ընդհանուր ծավալով որակավորման քննություններ յուրաքանչյուր առարկայից:

3. Ամփոփիչ ատեստավորում ԵՊՀ գիտության վարչության կողմից

Հետազոտողի գիտակրթական և հետազոտական ծրագրերով նախատեսված ուսուցման ավարտին յուրաքանչյուր ասպիրանտի համար կազմակերպվում է ամփոփիչ ատեստավորում՝ ասպիրանտին և նրա ատենախոսությունը որակավորելու և նախնական փորձաքննության պատրաստելու և երաշխավորելու համար:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքում տրվում է թույլտվություն ատենախոսությունը ներկայացնելու համապատասխան փորձագիտական հանձնաժողով՝ նախնական փորձաքննության և Գիտակոորդինացիոն խորհուրդ՝ հաստատման:

Գիտության վարչության Գիտական կադրերի պլանավորման և պատրաստման բաժինը, սահմանված ժամկետում ստուգման է ենթարկում վերոհիշյալ փաստաթղթերը, ասպիրանտի և հայցորդի առաջադիմության, որակավորման քննությունների և ստուգարքի հանձնման, ատեստավորումների արդյունքները, ատենախոսական աշխատանքի կատարման փաստացի տվյալներն ու ձևակերպումը: Այնուհետև ասպիրանտի գիտակրթական ծրագրի կատարողականի վերաբերյալ ներկայացվում է տեղեկատվություն և եզրակացություն՝ համաձայն ստուգաթերթի:

Ամփոփիչ ատեստավորման հիմնական չափանիշ է հանդիսանում Եվրոպական

բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) որակավորումների հենքով բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի (շրջափուլի) որակավորման համար սահմանված մի շարք համընդունելի պահանջների կատարումը, համաձայն որի՝ հետազոտողի որակավորում շնորհվում է ասպիրանտներին, ովքեր.

- ցուցաբերել են իրենց մասնագիտական բնագավառի համակարգային իմացություն,
- վարժ տիրապետում են իրենց մասնագիտական բնագավառի գիտական հետազոտության մեթոդներին,
- ցուցադրել են գիտական հետազոտության թեմա առաջադրելու, դրա հետազոտումը նախագծելու, իրականացնելու և որպես գիտական ավարտուն աշխատանք ամփոփելու իրենց ունակությունները,
- իրենց գիտական հետազոտություններով որոշակի ներդրում են ունեցել գիտության տվյալ բնագավառում, իսկ նրանց աշխատանքները հրատարակվել են հեղինակավոր ամսագրերում,
- ունակ են վերլուծելու, գնահատելու և ձևակերպելու նոր և համալիր գաղափարներ:

4. Քննարկում ամբիոնում

Ամփոփիչ ատեստավորման առաջին փուլը սկսվում է ատենախոսության կատարման առաջնային օղակից՝ ամբիոնից: Ներկայացված գիտական ատենախոսությունը դրվում է քննարկման ամբիոնի նիստի օրակարգում: Դրական արդյունքի դեպքում տրվում է նիստից արձանագրություն: Բացասական արդյունքի դեպքում տրվում է ժամանակ դիտողությունների հիման վրա շտկումներ կատարելու համար:

Էթիկայի կոմիտե

Ամբիոնի նիստի քննարկումից հետո դրական արդյունքով ատենախոսությունը ներկայացվում է էթիկայի կոմիտե:

Էթիկայի կոմիտեի (ԷԿ) հիմնական նպատակն է ապահովել համալսարանում կատարվող գիտահետազոտական աշխատանքների բարձր մակարդակը և նրանց համապատասխանությունը էթիկայի կանոններին: Էթիկայի կոմիտեի գործունեությունը չպետք է հակասի տեղական օրենսդրական ակտերին:

ԵՊԲՀ-ին առընթեր ԷԿ գործում է ռեկտորատի նիստի 10.11.2009թ. թիվ 12 որոշման համաձայն: Էթիկայի կոմիտեի խնդիրները հետևյալն են.

- Բժշկակենսաբանական բոլոր հետազոտությունների էթիկական փորձաքննություն,
- Էթիկայի կանոնների և փորձագիտության ընթացակարգերի մշակում և հրապարակում,

- ԵՊԲՀ-ում և այլ բժշկական հաստատություններում կատարվող գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների մասնակիցների իրավունքների պաշտպանություն:

Կոմիտեի կազմը պետք է բազմազան լինի, ընդգրկված լինեն համապատասխան մասնագետներ տարբեր բնագավառներից: Կոմիտեի նախագահի թեկնածությունը հաստատվում է ԵՊԲՀ Էթիկայի կոմիտեի խորհրդի կողմից, նախագահը նշանակում է կոմիտեի անդամներին: Կոմիտեն կազմված է առնվազն 11 և առավելագույնը 17 անդամներից:

ԷԿ-ի քննարկմանը պահանջվող փաստաթղթերը դիմորդը ներկայացնում է հայերեն լեզվով ստորին բերված պահանջների համապատասխան: Եթե հայտը ամբողջովին համապատասխանում է պահանջներին, ապա ընդգրկվում է նիստի օրակարգում: Եթե աշխատանքը չի համապատասխանում ԷԿ-ի պահանջներին, այն չի ընդունվում՝ բացատրելով մերժման պատճառը: Նիստի օրակարգը տեղադրվում է ԷԿ-ի կայք նիստից 7 օր առաջ: Այս ժամկետից հետո հայտերի ընդունումը դադարեցվում է: ԷԿ-ի եզրակացությունը դիմորդին տրվում է նիստի հաջորդ օրը:

ԷԿ-ի նիստերը կազմակերպվում են ըստ ժամանակացույցի: Անդամները նախապես ծանոթանում են համապատասխան փաստաթղթերին: Խորհրդատուները և ղեկավարները կարող են մասնակցել հայտի քննարկմանը, արտահայտել իրենց կարծիքը ըստ անհրաժեշտության կամ այն ուղարկել էլ. փոստով՝ գաղտնիության պայմանով:

Քննարկման ընթացքում ուշադրություն է դարձվում հետևյալ խնդիրներին՝

- հետազոտության ձևավորում, խնդիրների և նպատակների համապատասխանություն էթիկայի նորմերին,
- հետազոտության մեջ ռիսկի և օգտի պատճառաբանում,
- ստուգիչ խմբերի կիրառման նպատակահարմարություն,
- հետազոտությունը ընդմիջելու կամ դադարեցնելու ցուցանիշներ,
- հնարավորությունների համապատասխանություն հետազոտության խնդիրների և նպատակների իրականացման համար,
- հետազոտողների կազմի քննարկում,
- հետազոտողների ընտրության սկզբունքները,
- բուժօգնության մատուցում և հետազոտության մասնակիցների շահերի պաշտպանություն.
- ֆինանսական և ոչ ֆինանսական վնասի փոխհատուցում հետազոտության մասնակիցներին վնաս պատճառելու դեպքում,
- ԷԿ-ի պատասխանը կարող է լինել՝ 1) դրական, 2) դրական՝ դիտողություններով, 3) բացասական: Պատասխանը տրվում է գրավոր: Բացասական կամ մասնակի բացասական արդյունքի դեպքում բերվում են մանրամասն պատճառաբանություններ:

Առաջնային փաստաթղթերի, նյութի և մեթոդների ստուգման հանձնաժողով

Գիտական ատենախոսության ներկայացման, քննարկման և կայացման նպատակով անհրաժեշտ և կարևոր փուլերից մեկն է առաջնային փաստաթղթերի, նյութի և մեթոդների ստուգումը: Ասպիրանտը հանձնաժողով դիմելուց հետո դիմում- հայտի հիման վրա կցվում է փորձագետի, որը նշանակվում է հանձնաժողովի անդամներից և կատարում է ներկայացված բոլոր առաջնային փաստաթղթերի, նյութի և մեթոդների ստուգումը: Փորձագետի դրական եզրակացության դեպքում ասպիրանտի աշխատանքը դրվում է նիստի քննարկման և տրվում է նիստից արձանագրություն: Բացասական կամ մասնակի բացասական արդյունքի դեպքում տրվում է ժամանակ դիտողությունների հիման վրա թերությունները շտկելու, եթե ատենախոսը ընդունում է դրանք, և առաջիկա նիստին ներկայացնելու համար:

Առաջնային փաստաթղթերի, նյութի և մեթոդների ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթեր՝

- Թեզի մեկ օրինակ
- Փորձարարական կենդանիների դուրս գրման անդորագրի պատճենները
- Օգտագործված գրականության ողջ քարտադարանը (սկզբնաղբյուրների մշակումը)
- Փորձերի արձանագրության մատյանը
- Մորֆոլոգիական հետազոտության համար օգտագործված հյուսվածքների պարաֆինային բլոկները, պատրաստուկները, էլեկտրոնոգրամմաները, ֆոտոժապավենները
- Հետազոտվող դեղամիջոցների ներմուծման կամ այլ Փորձերի պայմաններում հեմոդինամիկայի և այլ ֆիզիոլոգիական պարամետրերի ցուցանիշների գրանցման թղթապանակը
- Կենսաքիմիական հետազոտությունների արդյունքների գրաֆիկական գրանցման թղթապանակը
- Հիվանդության պատմություններից արված թեմատիկ, հարկլինիկական կամ կլինիկական քաղվածքները (քարտերը), ամբուլատոր-կլինիկական դիտարկումների քարտերը (ըստ հետազոտվող խմբերի)
- Համաճարակաբանական, հիգիենիկ, ֆիզիկական և այլ բնույթի հարցումների տվյալների գրանցման մատյանը ըստ հետազոտվող խմբերի
- Արխիվային հիվանդության պատմությունների, էպիկրիզների ախտորոշիչ հետազոտությունների, բուժման սխեմաների քարտերը, բիոպսիոն նյութերի հիստոլոգիական հետազոտման ուղեգրերի պատճենները՝ հաստատված հիմնարկի ղեկավարի կողմից
- Հետազոտված հիվանդների ցուցակը՝ հաստատված հիմնարկի ղեկավարի կողմից
- Վիճակագրական մշակման եղանակը, համակարգչային ծրագիրը և արդյունքների վերլուծության մատյանը:

Հոդվածների, գիտաժողովների և այլ գիտական արդյունքների մասին փաստարկներ

Ատենախոսական թեմայի վերաբերյալ գրականության վերլուծության, ստացված արդյունքների և գործնական ներդրման հիման վրա կազմվում են գիտական հոդվածներ, թեզիսներ և մեթոդական ուղեցույցներ: Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքները զեկուցվում են տեղական և միջազգային գիտաժողովներում: Վերոհիշյալ բոլոր գիտական ձեռքբերումները ներկայացվում են տպագիր աշխատանքների ձևով:

Փաստաթղթերի ստուգում (քննությունների արդյունքներ, ընթացիկ ատեստավորման եզրակացություն, հանձնաժողովների եզրակացություններ, գիտական ղեկավարի կողմից եզրակացություն)

Ասպիրանտը ուսումնառության սահմանված ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 1 ամիս առաջ Գիտության վարչության գիտական կադրերի պլանավորման և պատրաստման բաժին է ներկայացնում փաստաթղթերի փաթեթ հետևյալ ցուցակով՝

- Թեմայի (պլան-անոտացիայի) հաստատման քաղվածք
- Քաղվածք ամբիոնի (գիտական խորհրդի) նիստի արձանագրությունից
- Էթիկայի կոմիտեի եզրակացությունը
- Առաջնային նյութի ստուգման ակտ
    - Գիտական ղեկավարի եզրակացությունը ատենախոսության ավարտուն լինելու մասին
    - Որակավորման քննությունների հանձնման տեղեկանք
    - Գիտական հոդվածների ընդհանուր ցուցակ 2-3 ձևի համաձայն
    - Համահեղինակների տեղեկանք
    - Սեղմագիր կամ տպագրված հոդվածների պատճենը
    - Տարեկան վարձի վճարման կտրոն
    - Ատենախոսության 1 օրինակ՝ տպագիր և էլեկտրոնային
    - Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
    - Դիպլոմների (մասնագիտական համապատասխանություն), անձնագրի, սոց. քարտի պատճենները, 2 լուսանկար
    - Ինքնակենսագրություն
    - Դիմում-հայտ, միջնորդագիր

Գիտական նյութի նախնական Փորձաքննություն, գիտակոորդինացիոն խորհուրդ, ամՓոՓիչ եզրակացություն, պաշտպանություն:

Հետազոտողների դասացուցակ

N	*Առարկա*	*Կրեդիտի քանակը*	*Ժամաքանակ*	*Անցկացման վայրը*	*Դասընթացներ անցկացնող դասախոսի ԱԱՀ*
1.	Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և գործիքակազմ	2,0	***60***		
2.	Բիոստատիստիկա	2,0	***60***		
3.	Հաղորդակցման կարողություններ և գործարար գրագրություն	1,5	**45**		
4.	Նախագծերի դիզայն, մշակում և կառավարում	1,0	***30***		
5.	Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն.	1,5	***45***		
6.	Գիտական էթիկա	1,0	***30***		
7.	Մասնագիտական օտար լեզու /ակադեմիական գրագրություն/	1,5	***45***		
8.	Բժշկական ինֆորմատիկա	2,0	***60***		
9.	Մտավոր սեփականության իրավունք և արտոնագրային գործ	1,0	***30***		
10.	Առողջապահական իրավունք	0,5	***15***		
11.	Մենեջմենթ. Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում	1,0	**30**		
12.	Բժշկական հոգեբանություն	0,5	**15**		
13.	Լաբորատոր հետազոտական մեթոդներ	1,0	**30**		
14.	Շրջակա միջավայր և առողջություն	0,5	***15***		

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՂԵԳԻՐ

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ներկայացնում ենք _____ ամբիոնի

« _____

_____ » թեմայով, դասիչը՝ Ժ_ 00.__

ասպիրանտ _____ հետազոտողի ծրագրով ուսուցման կրթական բաղկացուցիչի ***մասնագիտական պատրաստվածության կրթամասի***

առարկաների ցանկը:

Առարկայի անվանումը	Կրեդիտավորման եղանակը	I տարի	II տարի	III տարի	IV տարի	Քննություն	Ընդամենը
Մասնագիտական դասընթացներ - 1	1.Դասախոսություն	0.25	0.25	0.25			
	2. Գործնական պարապմունք	0.25	0.25	0.25			
	3. Ինքնուրույն աշխատանք	0.25	0.25	0.25			
	4.Առաջադրանքի կատարում	0.5	0.5	0.5			
	5. Որակավորման քննություն					4.0	**7.0**
Մասնագիտական դասընթացներ - 2	1.Դասախոսություն	0.25	0.25	0.25			
	2. Գործնական պարապմունք	0.25	0.25	0.25			
	3. Ինքնուրույն աշխատանք	0.25	0.25	0.25			
	4.Առաջադրանքի կատարում	0.5	0.5	0.5			
	5. Որակավորման քննություն					2.0	**5.0**
Մասնագիտական դասընթացներ - 3	1.Դասախոսություն	0.25	0.25	0.25			
	2. Գործնական պարապմունք	0.25	0.25	0.25			
	3. Ինքնուրույն աշխատանք	0.25	0.25	0.25			
	4.Առաջադրանքի կատարում			0.25			
	5. Ստուգարք					1.0	**2.0**

Մասնագիտական դասընթացներ - 4	1.Դասախոսություն	0.25		0.25			
	2. Գործնական պարապմունք	0.25		0.25			
	3. Ինքնուրույն աշխատանք	0.25		0.25			
	4.Առաջադրանքի կատարում	0.25		0.25		0.5	**2.0**

1 կրեդիտը = 30 ժամ, 1 ժամը = 40 րոպե

Ամբիոնի վարիչ՝ _____ _____

Ամսաթիվ՝

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 4
ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ 8
ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ (ՀԵՏԱԶՈՏՈՂԻ) ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 12
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 18
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19
ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ, ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ 22
ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՂԵԳԻՐ 31